

## **ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**25.10.2022**

### **«Ներուժ 3.0» սիյուռքի տեխնոլոգիական ստարտափների ծրագրի մասին**

Հոկտեմբերի 21-ին Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում մեկնարկել է «Ներուժ 3.0» սիյուռքի տեխնոլոգիական ստարտափների ծրագիրը, որն ավարտվելու է հոկտեմբերի 26-ին:

Ծրագրի օրակարգում ներառված են 21-րդ դարի տեխնոլոգիական զարգացման միտումների, վենչուրային կապիտալի ներգրավման, Հայաստանում բիզնես սկսելու և վերջինիս հետ կապված օրենսդրական դաշտի հարցեր:

Ծրագրի շրջանակում աշխարհի տարբեր անկյուններից Հայաստանում հյուրընկալվել են շուրջ 30 ստարտափների 60 ներկայացուցիչներ: Ծրագրի նպատակն է խթանել մասնագիտական հայրենադարձությունը, ինչը կնպաստի Հայաստանի տնտեսական առաջընթացին ու ստարտափ էկոհամակարգի զարգացմանը:

---

*Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:  
ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն  
հեռ/ֆաքս. 56 37 61  
էլ-փոստ. [mcba@cba.am](mailto:mcba@cba.am)  
[www.cba.am](http://www.cba.am)*